

Այս բոլոր վկայութիւնները ցոյց կուտան, որ հայ նախնիքը, 5-րդ դարէն շատ առաջ, գիր ունէին, բայց մոռացութեան տրուած էր: Խորենացի եւ Կորիւն կը պատմեն Մեսրոպի ճամբորդութիւնները մինչեւ Սամոս կղզին, ուր Հոտիանոս գեղազիրը օգնած է Մեսրոպեան տառերու ձեւաւորման:

Վարդան վարդապետ «Պատմութիւն Հայոց»-ի մէջ կը պատմէ (էջ 50), թէ Լեւոն Թաւադորի օրով գտնուած են դրամներ, որոնք դրոմշուած էին հայոց զանազան ԿՌԱՊԱՇՏ Թագաւորներէն հայերէն գրերով:

Խորենացի եւ Կորիւն, երկու հմուտ հայեր, քրիստոնէութեամբ տարուած ըլլալով՝ Մեսրոպի դիւտը կը պատմեն սքանչացումով եւ հրաշքի առասպելը կը յօրինեն: Իս. Յարութիւնեան «Հայոց Գիր», էջ 242, իրաւամբ կ'ըսէ.

«Որովհետեւ Հայոց հին այբուբենը կուպաշտական ժամանակաշրջանի արդիւնք էր, ըստինքեան հասկանալի է որ մեր չափազանց քրիստոնեայ հոգեւորական պատմադիւնները չեն ուզեցել յիշել դրա գոյութիւնը, կուպաշտ հայրերու գործի դովքը արած չլինելու համար»:

«Հայ ժողովուրդն կուպաշտական անցեա-

լի յիշատակներէց հեռու պահելու համար մեր եկեղեցականներէ ետանդն այնչափ մեծ է եղել, որ մինչեւ անգամ Խորենացին չէ ուզում անուշովն յիշել այն ոչ-քրիստոնեայ հեղինակներ, որոնցմէ ինք օգտուեր է»:

Քանի դեռ հայերու հին հայրենիքը խուզարկուած չէ եւ ձեռք չեն բերուած հնէպատմական վաւերագրեր, անկարելի է վերջնական խօսք ըսել այս մասին: Բոլոր տուեալները սակայն կը միտին ցոյց տալու, որ մեր հեթանոս նախնայրերը ունեցեր են գիր ու գրականութիւն:

Ամենէն հաւանականը այն է, որ մեր նախահայրերը ունէին 22 գիրեր, իսկ Սահակ Մեսրոպ աւելցուցին 14 տառեր: Ամէն պարագայի տակ անոնց ըրած մեծ գործը հայ գիրը հնճարկելը չէր, այլ վերակազմելը: Եւ ասիկա այնքան խոշոր նշանակութիւն ունեցող դէպք է, որ իրաւամբ արժան է որ մեր ժողովուրդը զանոնք կը դասէ սուրբերու կարգը:

ՀԱՅ ԳԻՐԸ ԵՒ ԳԻՐԻՔԸ  
ՔՐԻՍՏՈՆԵՅԻՆԻՍԹԵՆԷՆ ԵՏԻ

Ե՞րբէն ի վեր ծանօթ է մեր մէջ հայ գիրքը այն ձեւով, ինչպէս որ մենք սովոր ենք ճանաչելու:

Հայ գրքի ձեւաւորումը կը դնեն հինգերորդ դարի առաջին կէսին մէջ, երբ վերջնականապէս կազմուեր են մեր գործածած տառերը: Այսպէս կարծողները, չեմ գիտեր հնախօսական ի՞նչ փաստերու վրայ կը կրկնեն՝ թէ՛ հայեր կը գործածէին մինչ այդ յունարէն եւ ասորերէն տառեր:

Ես կը խորհիմ թէ այդ թուականէն առաջ ալ հայութիւնը, որ ունէր իր հայրենիքը, իր սեփական կրօնը, իր ճարտարապետութիւնը, իր առանձին հոգեւորականութիւնը (որ հայերէն քրիստոնէութիւնն էր) եւ այդ հոգեւորականութիւնը իրեն էր վերապահած գրքի եւ արձանագրութիւններու զբաղումի մեծնաչնորհը, ինչպէս նաեւ այն որ՝ այդ մարդի մէջ կատարուած գործերը խնամով կը պահուէին Արամազդի մեհեանին մէջ եւ ուր ասորի աղանդազէտ Բարդէզան եւ Ուլիւրբանասիրութիւններ ընելու նպատակով պարած են, ապա ուրեմն շատ առաջ քան հին-

Հ. Տ. Պ. Կ. ձ. եւայլն, զոմանս ուղղագիրս, իսկ զոմանս խոտորնագիրս, բայց ոչ գտանելով ի նոսա տառին չձայնաւոր՝ չեղեւ ինձ մարթ անուն ինչ ընթեանուր»:

Ազաթանդեղոս կը յիշէ, Հռիփսիմեանց նահատակութեան օր պատահած կոտորածի պատմութիւնը մէջ.

«Արդ իբրեւ այս շփոթ ամբօխի եղեւ եւ ի նոցանէն ի մէջ կոտորելոց մարդկան բազմութեան ոմանք ի մեծամեծ ամբօխ ստրատորացն արքունի անդէն ընթացան պատմել թագաւորին դամենայն բանս նոցա, Բանգի զիպեցան անդ նշանագիրք՝ գրեցին դամենայն բանս եւ ընթեցան առաջի թագաւորին» (էջ 140):

Ազաթանդեղոս կը յիշատակէ նաեւ, որ (էջ 89-90) Տրդատի հրամանով Գրեգոր Լուսաւորիչը շարաբարած առնին տանակալները գրեցին անոր բոլոր ըսածները, որպէսզի թագաւորին առջեւ կարգան:

Ղազար Փարպեցի կը յիշէ, որ հայկական հին տառեր բոլորովն մոռցուած չէին, բայց ոչ որ հոգ կ'ընէր գործածել զանոնք:

Խորենացի կ'ըսէ... «զՎաղնջուց զտեալ նշանագիրք տառից»:

Կորիւն կ'ըսէ. «Մանաւանդ զի եւ նշանագիրն իսկ՝ յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան»: